



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 11 » մարտի 2020թ.

№ 82-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՎ (2019թ.Ն-COV) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ
ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ԴԵՊՔԵՐԻ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ, ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ, «ՄԵՂՄ» ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ
ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԿՈՆՏԱԿՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՎԱՆԴԻ
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՎԱՐՈՒՄԸ, ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ԵՎ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ
ՎԱՐԱԿԻ (2019թ.Ն-COV) ՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ)
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը և Արցախի Հանրապետությունում Նոր կորոնավիրուսային (2019թ.Ն-CoV) վարակի դեմ պայքարի միջոցառումներն իրականացնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետությունում Նոր կորոնավիրուսային վարակի (2019թ.Ն-cov) համաճարակաբանական դիտարկումը, դեպքերի համաճարակաբանական բնորոշումը, լաբորատոր հետազոտությունը և նմուշառումը, «մեղմ» արտահայտված ախտանշաններով հիվանդների տնային խնամքը և կոնտակտների բժշկական հսկողությունը, հիվանդի կլինիկական վարումը, ներհիվանդանոցային վարակի տարածման կանխարգելումը մեթոդական ուղեցույցը (Ժամանակավոր)՝ համաձայն հավելված 1-ի.

2) Նոր կորոնավիրուսային վարակի (2019-ՆCoV) զսպման/վարման միջոցների հավաքածուն (Ժամանակավոր)՝ համաձայն հավելված 2-ի:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին՝ ապահովել սույն հրամանի հավելված 1-ով հաստատված մեթոդական ուղեցույցի և հավելված 2-ով հաստատված Նոր կորոնավիրուսային վարակի (2019-nCoV) զսպման/վարման միջոցների հավաքածուի գործադրումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության կազմակերպման աշխատանքների համակարգող Կ. Ալեքսանյանին:



Ա. ԲԱՂՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (2019թ. n-CoV) ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ, ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ, «ՄԵՂՄ» ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԿՈՆՏԱԿՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՎԱՆԴԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՎԱՐՈՒՄԸ, ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՑԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ենթակայության և անկախ կազմակերպարարական ձևից բժշկական կազմակերպությունների, ինչպես նաև Նոր կորոնավիրուսային վարակի (2019թ. n-CoV) դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման, իրականացման ու գնահատման գործընթացներին մասնակցող բժշկական կազմակերպությունների մասնագետների համար:

2. Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է Արցախի Հանրապետությունում Նոր կորոնավիրուսային վարակի (2019թ. n-CoV) համաճարակաբանական դիտարկումը, դեպքերի համաճարակաբանական բնորոշումը, լաբորատոր հետազոտությունը և նմուշառումը, «մեղմ» արտահայտված ախտանշաններով հիվանդների տնային խնամքը և կոնտակտների բժշկական հսկողությունը, հիվանդի կլինիկական վարումը, ներհիվանդանոցային վարակի տարածման կանխարգելումն ապահովելու համար:

3. Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունների հիման վրա, որոնք կարող են փոփոխվել (թարմացված տեղեկատվությունը/առաջարկությունները տես՝ www.who.int պաշտոնական կայք էջում):

4. Կորոնավիրուսը վիրուսների առանձին ընտանիք է, որն իր մեջ ներառում է 2 ենթաընտանիք՝ ներառելով 40 տեսակ: Դրանք վարակում են մարդկանց, թռչուններին, կովերին, խոզերին և նապաստակներին: Վիրուսն առաջին անգամ հայտնաբերվել է 1965 թվականին: Կորոնավիրուսներով առաջին անգամ լարված համաճարակային իրավիճակ արձանագրվել է 2003-2004թ.թ.՝ պայմանավորված Ծանր սուր շնչառական համախտանիշով կամ ատիպիկ թոքաբորբով (SARS CoV, severe acute respiratory syndrome) և 2011-2012թ.թ.՝ Մերձավոր արևելքի շնչառական համախտանիշով (MERS CoV, Middle east respiratory syndrome):

5. Սույն փաստաթղթի նպատակն է սահմանելու Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պայմանավորված դեպքերի համաճարակաբանական դիտարկման սկզբունքները, մասնավորապես՝

- 1) մարդ, վայր, ժամանակ.
- 2) կլինիկական արտահայտվածությունը (ախտանշաններ).
- 3) հիմնական պատճառները և ուղեկցող հիվանդությունները.
- 4) հիվանդության կլինիկական ընթացքը, ծանրությունը և ելքը.
- 5) համաճարակաբանական վերհուշը (ուղևորություն):

6. Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պայմանավորված դեպքեր, որպես նոր վարակիչ հիվանդություն առաջին անգամ արձանագրվել է 2019 թվականի դեկտեմբերին՝ Չինաստանում (տվյալները սահմանափակ են, քանի որ հետազոտությունները դեռևս շարունակվում են): Չինաստանում, համաճարակային իրավիճակը լարված է՝ պայմանավորված Նոր կորոնավիրուսով (2019-nCoV) վարակով: Վիճակագրական տվյալներ չեն ներկայացվում, քանի որ դրանք ենթարկվում են փոփոխության:

7. Հարուցիչը պատկանում է կորոնավիրուսների ընտանիքին: Սակայն վիրուսն իր հատկություններով տարբերվում է կորոնավիրուսների ընտանիքի մյուս վիրուսներից:

8. Հիվանդության գաղտնի շրջանը 14 օր է:

9. Հիվանդությունը փոխանցվում է կենդանիներից մարդուն, սակայն արձանագրվում է նաև մարդուց մարդ փոխանցում, ինչը հնարավոր է սերտ շփման արդյունքում, մասնավորապես՝

- 1) Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պացիենտների վարումը.
- 2) Նոր կորոնավիրուսային վարակի (2019-nCoV) հետ միևնույն սենքում կեցությունը.
- 3) Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պացիենտներին տեսակցությունը, կամ այն սենքերում մնալը, որտեղ եղել են պացիենտները.

4) Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պացիենտների, այդ թվում՝ կասկածելի միևնույն բնակարանում կեցությունը:

Այս դեպքում շատ կարևոր է պացիենտի հետ համաճարակաբանական կապը՝ 14 օրվա ընթացքում մինչև հիվանդությունը և հիվանդությունից հետո:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն դեպքերին, որտեղ լաբորատոր հետազոտության արդյունքն անորոշ է:

2. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՎ (2019-nCoV) ԴԵՊԷՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԴԵՊԷՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

10. Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պայմանավորված դեպքերի համաճարակաբանական դիտարկման նպատակն է՝

1) հայտնաբերել Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պայմանավորված դեպքերը / կլաստերները և բացահայտելու ցանկացած գործոն, որը փաստում է մարդուց մարդու կայուն փոխանցման մասին.

2) պարզել ռիսկի գործոնները և վիրուսի աշխարհագրական տարածվածությունը:

11. Լրացուցիչ կլինիկական և համաճարակաբանական հետազոտություններն անհրաժեշտ են.